Վիրահայոց թեմի եկեղեցիներում ընթերցվեց Ն .Ս .Օ .Տ .Տ . Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ

2014 թվականի դեկտեմբերի 28-ին, հընթացս Սուրբ և Անմահ Պատարագի, Վիրահայոց թեմի Սամցխե Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդության, Քվեմո Քարթլիի և Բաթումիի գործող բոլոր եկեղեցիներում և հոգևոր հովվություններում ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակը Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ:

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ կիրակնօրյա Սուրբ Պատարագի ժամանակ Սրբատառ Կոնդակը հանդիսավորությամբ բարձրացվեց Սուրբ Սեղան և հոգևոր սպասավոր Տեր Մանուկ քահանա Զեյնալյանի կողմից ընթերցվեց հավատացյալ ժողովրդին:

Հավարտ Սուրբ Պատարագի Սրբազան Հայրը եկեղեցու հավատացյալներին ներկայացրեց Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում համայնքի կողմից նախատեսվող հիմնական ծրագրերը:

1 / 2

Վիրահայոց թեմի եկեղեցիներում ընթերցվեց Ն .Ս .Օ .Տ .Տ . Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ

Թեմակալ առաջնորդը նաև շնորհավորեց հավատացյալներին գալիք Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առիթով:

2 / 2